ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/02

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Երանոսշին» ՍՊԸ-ի տնօրեն՝

Գ. Ալոյանի (Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք առ՝ 11.01.2019թ., պետական գրանցման համար՝ 11.110.102028)

Քննելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի /25կմ երկարությամբ/ հիմնանորոգում», «ՀՀ Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքի հիմնական հատվածի ջրամատակարարման ցանցի կառուցում», «ՀՀ Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում», «ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Հանրապետության պողոտայի ջրահեռացման համակարգի անցկացում», բաղկացած 4 չափաբաժիններից, աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգի շրջանակներում «Երանոսշին» ՍՊԸ-ի կողմից 09.01.2019թ. ներկայացված և 09.01.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/02 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Երանոսշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Երանոսշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 09.01.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերը հրապարակվել է 2018 թվականի դեկտեմբերի 10-ին:

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը սահմանվել է 17.12.2018թ.: Ընթացակարգի կայացման օրը՝ 17.12.2018թ:

«ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով գնմանը հաղթող է ճանաչվել «Երանոսշին» ՍՊԸ-ն:

«ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից դեկտեմբերի 20-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ ՖՆ պահանջվող էլեկտրոնային հասցեներին և ներկայացվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով մրցույթի Չափաբաժին 4-րդի մասով 1-ին տեղ զբաղեցրած՝ «Երանոսշին» ՍՊԸ-ի մասին պահանջվող տեղեկատվությունը:

ՊԵԿ եզրակացությունը ստացվել է դեկտեմբերի 25-ին մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող: Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարը կազմել է 82,000 ՀՀ դրամ, որը գերազանցում է նվազագույն 50 000 դրամը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է ապացույցներ, որ համարվում է պարտաճանաչ հարկ վճարող, որևէ հարկային պարտավորություն չունի, ավելին՝ հարկային վճարների մասով ունի բավականաչափ գերավճար, այն է՝ «17» դեկտեմբեր 2018 թվականի դրությամբ «Երանոսշին» ՍՊԸ-ն, 03524692-ի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները, դեբետային գումարները, սահմանված չափից ավել վճարված գումարները և միասնական հաշվում առկա գումարները, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա, կազմում են՝ 4 465 895 ավելացված ավելացված արժեքի մասով գերավճար:

«Երանոսշին» ՍՊԸ-ի պարտադիր վճարների մասով իր պարտավորության մասին տեղեկանալուց անմիջապես հետո կատարել է 100 000 ՀՀ դրամ վճարը:

15.12.2016թ. ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքը», որը ուժի մեջ է մտել 09.01.2017թ.: Վկայակոչված օրենսդրության 1-ին հոդվածի համաձայն «...օրենքով կարգավորվում են մարտական գործողությունների հետևանքով զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են հատուցման հիմնադրամի ստեղծման և գործունեության կարգն ու պայմանները»:

Նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում է «Դրոշմանիշային վճար» հասկացությունը, համաձայն, որի «Դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով»:

Վկայակոչված օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2- րդ, 5-րդ ե 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են 1000 դրամ

գումարի չափով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ 12 000 դրամ գումարի չափով»:

Սույն իրավական հարթության վրա անհրաժեշտ է իրավական գնահատական տալ «պարտադիր վճար» եզրույթին ներկայիս գործող սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի լույսի ներքո:

Մասնավորապես ՀՀ սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

27.11.2005թ. ընդունված ՀՀ սահմանադրության մեկնաբանությունների համաձայն՝ Հարկերը՝ «պարտադիր և անհատույց այն վճարն է, որը հանրային իշխանության գործունեության ֆինանսական ապահովման նպատակով պետական և «կամ» համայնքների բյուջեներ է մուծվում վճարողների կողմից ինքնահարկման ու կամավորության հիման վրա կամ գանձվում պետական հարկադրանքի միջոցով», տուրքեր կամ պարտադիր այլ վճարը՝ «պետական և կամ համայնքների բյուջեներ մուծվող պարտադիր և անհատույց այն վճարն է, գանձույթը, որի վճարումը հանդիսանում է պայմաններից մեկը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն վճարողի օգտին իրավաբանական նշանակության գործողություններ կատարելու համար»:

Այսպիսով, փաստ է, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանր պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված «Դրոշմանիշային վճար» եզրույթը չի կարող դիտարկվել «հարկեր» եզրույթի տիրույթում, այն պետք է դիտարկել «Տուրքը կամ պարտադիր այլ վճարը» տիրույթում:

Սույն պարագայում «Դրոշմանիշային վճար» կատարելուն պարտադրելով, օրենսդիրը պարտադրում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կատարել վճարում յուրաքանչյուր ամիս «զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման

պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չավտով դրոշմանիշ գնելու միջոցով:

Ինչպես գործող, այնպես էլ, նախկին սահմանադրությունների տրամաբանական վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ «Տուրքը կամ պարտադիր այլ վճարը» կատարելու արդյունքում վճարողի օգտին պետք է կատարվեն իրավաբանական նշանակության գործողություններ:

Սույն պարագայում, սակայն իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ չեն կատարվում վճարում կատարողի օգտին, այս դեպքում դրոշմանիշային հարկադիր վճար կատարողը իր կամքից անկախ գնում է ինչ-որ դրոշմանիշ, որի գնման համար ինքը կատարում է հարկադիր գործողություն:

Հետևաբար, դրոշմանիշային վճարը չի կարող համարվել հարկային պարտավորություն, ուստի անհիմն է Ընկերությանը զրկել Պայմանագիր կնքելու հնարավորությունից մրցույթում հաղթող ճանաչվելու պարագայում, քանի որ Ընկերությունը համարվում է պարտաճանաչ հարկ վճարող, ինչի մասին վկայում է 4 465 895 ՀՀ դրամ գերավճարը:

Ընկերությունը խնդրել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին պարտավորեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ընդունել համապատասխան որոշումներ, այն է՝ կնքել պայմանագիր ընթացակարգի հաղթող ճանաչված ընկերության հետ:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը 11.01.2018թ. ներկայացրել է գրություն, որով բողոքի պահանջը վերաձևակերպել է հետևյալ կերպ.

Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Երանոսշին» ՍՊԸ-ի հայտը:

«Երանոսշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.01.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը էլեկտրոնային եղանակով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.01.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 14.12.2018թ. հայտ է ներկայացրել «Երանոսշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի՝ համաձայն՝ «Երանոսշին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից 4-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 25.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Երանոսշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 82 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Երանոսշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Երանոսշին» ՍՊԸ-ի կողմից 09.01.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 14.12.2018թ. հայտ է ներկայացրել «Երանոսշին» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի՝ համաձայն՝ «Երանոսշին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից 4-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 20.12.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե «Երանոսշին» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 25.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Երանոսշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 82 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Երանոսշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 14.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 14.12.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն, ուսումնասիրելով 14.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում է, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 14.12.2018թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Սույն հանգամանքը հաշվի առնելով գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Երանոսշին» ՍՊԸ-ի կողմից 09.01.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/68/70/72/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Երանոսշին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ